

**Գ. Հ. Տ. Տ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ Ի. ՏԱՆՅ  
ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՒՄԻ  
ՕՐՀՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Պատուարժան Մեծարգոյ ներկայացուցիչներ,  
Սրբազն Հայրեր,  
Հոգեւորականներ եւ սիրելի հիւրեր,

Նախքան «Բազմավիպ»ի գովքը հիւսելու եւ անոր փառապանծ փառքի մասին խօսելու, կ'ուզեմ սրտագին շնորհաւորութիւններս եւ երախտագիտութիւնս յայտնել Սփիւռքի Նախարարութեան, որ անխոնջ կերպով եւ հաւատարմութեամբ կը շարունակէ յայտնել մեր ազգային թաքուն արժէքները, ինչպէս պարագան է այսօր Բազմավիպի 175ամեակին:

Միսիթարեանը այն Միաբանութիւնն է, որու հովանիին տակ ամբարեցինք մեր հայագիտութիւնը: Մեծ պատիւ կը համարեմ ինձի, Զեզի հետ միասին տօնել Երիտասարդ Բազմավիպի 175ամեակը: Երիտասարդ կ'ըսեմ, քանի որ Հին Կտակարանի Նահապետները աւելի քան 300 տարիներ կ'ապրէին: Հետեւաբար «Բազմավիպ»ը դեռ երիտասարդ կը համարուի եւ մաղթանքս է, որ երկար հարիւաւոր տարիներ ապրի ու խոր ծերութեան հասնի:

Բազմավիպի Նահապետի կոչումով, պահուեցան ու պահպանուեցան մեր ազգային գիտական-գրական եւ հոգեւոր արժէքները, մէկ խօսքով Հայոց պատմութիւնը: Բազմավիպը 175 տարիներու ընթացքին դարձաւ անսպառ աղբիւր պատմաբաններու, գրադէտներու, բանասէրներու, արուեստագէտներու եւ ամէն գիտութեան ծարաւներուն:

Այս առիթով, Զեզի կը բերեմ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ՝ Գրիգոր Պետրոս ի. Կաթողիկոս Պատրիարքի Հայոցպետական օրհնութիւնը եւ սրտագին բարեմաղթանքներն ու շնորհաւորութիւնները նախ Միսիթարեան Միաբանութեան եւ Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան, նման սրբանուէր գործունէութեան

համար, մաղթելով որ այս ազգանուէր գործունէութիւնը շարունակէ գտնել նման արժէքներ, որոնք կարող են դառնալ փարուներ ոչ միայն Հայ ազգի զաւակներուն, այլ եւ համայն աշխարհին:

Փառք «Բազմավիճակ»ին, Միսիթարեան Միաբանութեան, Փառք Հայաստանի եւ Հայ ժողովուրդի զաւակներուն, որոնք պիտի շարունակեն «Բազմավիճակ»ի նման տանիլ գիտութեան ջահը աշխարհ չորս ծագերը:

ՈՒՍՖԱՅԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ  
ՎԻԹԱԿԱԼՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՍՏԱՆԻ Եւ  
ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՐՈՊԱՅԻ